

ՐԱՖՖՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Տ. Գ. ԽՈՐՀԻՄՅԱՆ

Հայ մեծ վիպասան Րաֆֆու մահվանից մի քանի տարի անց, նրա ընտանիքի երեք անդամները՝ այրին՝ Աննա Րաֆֆին (ծնված Պարսկաստանի Ուրմիա քաղաքում 1848 թ.) ավագ որդին՝ Արամը (ծնված Բավրիզում 1875 թ. օգոստոսի 15-ին) և կրտսեր որդին՝ Արշակը (ծնված Ագուլիսում 1879 թ.) Թիֆլիսից հեռանալով, 1895 թ. վերջերին մշտական բնակություն հաստատեցին Լոնդոնում:

Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում հաստատվելու շարժառիթն այն էր, որ Աննա Րաֆֆին մտադիր էր նախ՝ Վիեննայի Միլիթարյանների հետ մոտիկից առնչվել և նպաստավոր պայմաններ ստեղծել ամուսնու անտիպ աշխատությունները հրատարակելու համար: Մյուս կողմից, նա որոշել էր կատարել մեծանուն գրողի պատգամը. որդիներին եվրոպական բարձրագույն կրթություն տալով՝ նրանց ազգային գործունեության ասպարեզ մղել որպես բարեկիրթ մտավորականներ, որպես հայրենասեր գրողի արժանավոր ժառանգներ:

Րաֆֆիները Լոնդոնում բնակություն հաստատեցին մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ լոնդոնահայ զաղթօջախի ազգային-հասարակական, գրական-մշակութային կյանքում մեծ աշխուժություն էր տիրում: 1889 թ. Լոնդոնում Միհաս Չերազը սկսեց հրատարակել «Լ'Արմենի» քաղաքական-գրական կիսամսյա թերթը ֆրանսերեն, որը մի որոշ ժամանակ (1891—1896) զուգահեռաբար լույս էր տեսնում նաև անգլերեն («Արմենիա»):

1897 թ. Լևոն Բաշալյանը, ապա Արփիար Արփիարյանը (1898-ին) հաստատվեցին Լոնդոնում: Նրանց ջանքերով լույս տեսան նախ «Մարտ» ամսաթերթը (1897—1901), ապա՝ «Նոր կյանք» հանդեսը (1898—1902): Իսկ Սուրեն Պարթևյանը 1898 թ. Մանչեստրում հրատարակեց «Վաղվան ձայնը» շաբաթաթերթը:

Մամուլի էջերում նրանց, ինչպես նաև մի որոշ ժամանակ Լոնդոնում ապաստանած Նովանդ Օտյանի գործունեությունը զուգակցվում էր հասարակական բազմազան և բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման հետ: Հայ գրականությունը, մշակույթին, ազգային խնդիրներին նվիրված երևույթների ու ցերեկույթների ժամանակ նրանք հանդես էին գալիս իրենց բանիմաց գրույցներով, հայոց պատմության վերաբերյալ հետաքրքիր բանախոսություններով, որոնցով ջերմացնում էին ներկա եղող հայ վտարանդիների հայրենաբաղձ սրտերը: Մերթ ընդ մերթ նշելով ավանդական հայկական տոները, նրանք մի նպատակ էին հետապնդում՝ լոնդոնահայ համայնքի մեջ պահպանել հայ ժողովրդի ավանդական նիստուկացը, ազգային գեղեցիկ սովորությունները և հայրենասիրական զգացմունքները:

Րաֆֆիները հենց առաջին օրերից մեծ խանդավառությամբ մասնակցում են վերը նշված բոլոր տեսակի միջոցառումներին, գրկաբաց և սրտաբաց ընդունվելով ներկաների կողմից:

Խաբավերջին լոնդոնահայ զաղթօջախը համալրվում է մտավորականներով, ուսանողներով, արհեստավորներով և հատկապես կոտորածներից մազապուրծ փախած նորանոր զաղթականներով: Գնալով հրամայական պահանջ էր դառնում՝ ստեղծել մի որևէ կազմակերպություն իր հսկող և գործադիր մարմիններով, ընտրել հիմնավոր հավաքատեղի, որտեղ հնարավոր լիներ անցկացնել տոնական հանդեսները, գեղարվեստական միջոցառումները, դասախոսությունները և հատկապես ազգային հարցի շուրջը ծագած բանավեճերը:

1898 թ. Աննա Րաֆֆու, Արամ և Արշակ Րաֆֆիների և այլ հայրենասերների ջանքերով հիմնադրվում է Հայկական ակումբը և այդ ակումբի կորիզը

հանդիսացող լոնդոնահայ համայնքի դեմոկրատական կազմակերպությունը՝ «Լոնդոնի հայ գործավորների և ուսանողների միությունը»։ Այդ կազմակերպությունը իր մեջ ընդգրկում է մեծ քաղաքում ապաստանած մոտ 400 հայերի (րոլոր խավերից)։

Լ. Բաշալյանը, Ա. Արփիարյանը, Ե. Օտյանը և արևմտահայ մյուս անվանի գրողները այդ լսարանը անհապաղ օգտագործեցին իրենց բանաստեղծությունների, գրական-գեղարվեստական, հոբելյանական, մշակութային միջոցառումների համար։

Հետագայում Րաֆֆիները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև հայասեր անդլիացիների լոնդոնում կազմակերպած հայանպաստ միջոցառումներին, որոնց մասնակցում էր հայ մշակույթի երախտավորներից մեկը, լոնդոնահայ գրող, գեղանկարիչ, թարգմանիչ, գրականագետ, արևմտահայ ագիտ, հասարակական և մշակութային գործիչ Զաբել Բոյաջյանը (1872—1957)։ Վերջինս Թուրքիայում Անգլիայի փոխհյուպատոս Թովմաս Բուլաջյանի դուստրն էր, որը հոր ողբերգական մահից հետո, համիդյան կոտորածներից մաղապուրծ, 1895 թ. վերջերին իր անգլուհի մոր և եղբոր՝ Հենրի Բոյաջյանի հետ մշտական բնակություն էր հաստատել լոնդոնում։

Անգլիացիների կազմակերպած հայանպաստ միջոցառումներից մեկի ժամանակ հայտնում են, որ հյուրերի թվում է նաև հայագրի մեծ գրող Րաֆֆու արին։ Զաբել Բոյաջյանը, որ անշուշտ ծանոթ էր մեր ազգային մեծ վիպասանի ստեղծագործություններին և խոր պատկառանք էր տածում պաշտելի գրողի հիշատակի հանդեպ, ծանոթանում է տիկին Աննա Րաֆֆու հետ։

Այդ հիշարժան հանդիպման առթիվ հետագայում Բոյաջյանը ակնածանքով գրում է. «Այրիի սևեր հագած և դեռ գրեթե սև մազերով տիկին մը, տըխուր դեմքով և խորունկ սև աչքերով։ Առաջին վայրկյանն իսկ վրաս մեծ հարգանքի և հիացումի տպավորություն ձգեց։ Փափագ հայտնեց, որ իրենց այցելելն մոռս հետ, և անկե ետքը իրենց տունը մեր տանը պես նկատել տվավ ինձի»¹։

Րաֆֆու ընտանիքի մշտական այցելուն, անկեղծ բարեկամներից և մտերիմներից մեկը դառնալով, Բոյաջյանը անմիջապես նկատում է, որ «Րաֆֆի ընտանիքին մեկ ուրիշ հատկությունը հյուրասիրությունն էր։ Իրենց սեղանին շուրջը միշտ կային հայեր, ուսանողներ, գաղթականներ։ Մի խոսքով ամեն հայ, որ հայրենասեր էր, իրենց բով ընդունված էր որևէ օր և որևէ ժամ։ Հայկական կեդրոն մըն էր, երբ ուրիշ կեդրոն չկար։ Բախտեն օտար երկրի մեջ քշվողները այնտեղ կգտնեին բարեկամություն, սփոփանք, իրենց սիրտին մոտ խնդիրներու վրա խոսելու առթիվ։ Հյուրասիրություն մը, որ հյուրընկալներուն լայն և աղնվական հոգիեն կբխեր»²։

Դարասկզբին Րաֆֆիների լոնդոնի տունը ազգասիրական ոգին միշտ վառ պահելու և հայ ժողովրդի ապագան ուս մեծ ժողովրդի հեղափոխական պայքարի հետ կապելու մի այնպիսի կենտրոն էր, որը մագնիսի նման իր կողմն էր ձգում թե՛ լոնդոնում ապրող և թե՛ եկվոր հայերին։ Եվ չպետք է պատահական համարենք այն հանգամանքը, որ բաղամթիվ ազգային և մշակութային գործիչների թվում Րաֆֆիների տանը եղել են նաև ՌՍԴԲԿ 5-րդ համագումարի մի խումբ հայ պատգամավորներ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ։ Ականատեսների վկայությամբ «Լոնդոնի հայ գործավորների և ուսանողների միության» անունից Արամ Րաֆֆին համագումարի հայ սլատվիրականներին խնդրել է հանդիպել լոնդոնաբնակ հայերի հետ։ Հանդիպումը կայացել է, հայ պատվիրականները զրուցել են և պատասխանել լոնդոնահայերին հուզող հարցերին, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի

1 Չ. Բոյաջյան. Րաֆֆիի ընտանիքը. — «Րաֆֆի», Փարիզ, 1937, էջ 106։

2 Նույն տեղում, էջ 107։

իրավիճակի վերաբերյալ³։ Ավելի ուշ Րաֆֆիների պատվավոր հյուրն է եղել նաև զորավար Անդրանիկը⁴։

«Լոնդոնի հայ գործավորների և ուսանողների միությունը» յուրաքանչյուր բարեպատեհ առիթով հայկական ակումբ հաճախողների համար հանդիպումներ է կազմակերպում նաև Լոնդոն ժամանած նշանավոր հայ կամ օտարազգի ազգային-հասարակական, գրական-մշակութային գործիչների հետ։ Որպես օրինակ նշենք հանդիպումը Մինաս Զեբազի հետ 1902 թ., Արշակ Զոպանյանի հետ 1905 թ. և Անգլիայում հայոց դատի պաշտպաններից մեկի՝ պատմաբան և դիվանագետ լորդ Զեյմս Բրաչսի ու այլոց հետ⁵։

«Հայ գործավորների և ուսանողների միությունը» հայոց դատին և հայ գաղթականներին ու որբերին օգնություն ցույց տալու նպատակով բարեկամական կապեր հաստատեց նաև հայասեր անգլիացիների կազմակերպած հայանպաստ զանազան բարեգործական ընկերությունների հետ։

Րաֆֆու ընտանիքի կյանքի լոնդոնյան շրջանին լավատեղյակ, Րաֆֆիների կազմակերպած հայկական ակումբի բոլոր միջոցառումների ակտիվ մասնակից Բոյաջյանը հետագայում գրում է. «Բնականաբար Րաֆֆիի որդիքը իրենց ուսանողական հասակին վառված էին հայրենասիրությամբ, քանզի «Հայ գործավորներու և ուսանողներու միություն» անվան տակ Լոնդոնի մեջ առաջին հայկական ակումբը իրենք հաստատեցին։ Այս ակումբը համեստ կերպով շարունակեց իր գործունեությունը ժամանակ մը, շաբաթը մեկ անգամ հավաքվելով սենյակի մը մեջ, զոր անգլիացի համակրող մը իրենց տրամադրեց։ Երբեմն ավելի կարևոր հանդեսներ կկազմակերպվեին, ուր դասախոսություններ, հայերեն երգեր և այլն տեղի կունենային»⁶։

Իրոք, Րաֆֆու որդիները գործում էին հայրենասիրական մեծ եռանդով, միաժամանակ ջանադիր ուսանում։ Արամ և Արշակ Րաֆֆիները ավարտել էին Քիֆլիսի ներսիսյան դպրոցը։ Արամն իր ուսումը շարունակում է Լոնդոնի համալսարանում, ուսումնասիրելով լեզուներ և անգլիական գրականություն։ Ուսումնառությունից հետո նա զբաղվում է ուսուցչությամբ։ Իսկ Արշակ Րաֆֆին մեկնում է Պետերբուրգ բժշկություն սովորելու։ Ուսումնառության շրջանը ավարտելով, նա կրկին վերադառնում է Լոնդոն և նմանապես զբաղվում ուսուցչությամբ։

1913 թ., անգլիացի Բաքստոն եղբայրների հետ Արևմտյան Հայաստան և Կովկաս ճանապարհորդություն կատարելուց հետո «Արամը Լոնտոն վերադառնալով եղբորը հետ ձեռնարկեց հայկական ակումբը ընդարձակել և վերակազմել «Հայոց միացյալ ընկերություն» անունով։ Լոնտոնի գրեթե բոլոր հայերը անդամակցեցան։ Քոլոնել Կրեկորի՝ հնդկահայ մը, նախագահ ընտրվեցավ»։ Աննա Րաֆֆին ընտրվում է այդ ընկերության փոխնախագահ։ 1913 թ. հուլիսից ընկերությունը հրատարակեց «Արարատ» միամսյա անգլերեն հանդեսը։ «Վերակազմված ընկերության համար գեղեցիկ սենյակներ վարձվեցան։ Իսկ մեծ հանդեսները տեղի կունենային հարմար սրահներու կամ թատրոններու մեջ»⁷։

Ինչպես վկայում է Զաբել Բոյաջյանը, հատկապես Րաֆֆիների գործարար նախաձեռնությամբ, իհարկե, նաև «Հայկական միացյալ ընկերության» գործունեության շնորհիվ, հայկական ակումբի կազմակերպած միջոցառումների նշանակությունը դուրս է գալիս համայնքի մշակութային կյանքի սահմաններից և մեծ թվով անգլիախոս մտավորականների ուշադրությանն արժանանում։ Հայ մշակույթով հետաքրքրվող օտարազգի մտավորականների թիվը հետզհետե ավելանում է։

³ Տե՛ս Խ. Հ. Բ ա ր ս ե դ յ ա ն. Ստեփան Շահումյան. Կյանքի և գործունեության մասին. Երևան, 1968, էջ 195։

⁴ «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1922, № 20, էջ 654։

⁵ «Անահիտ», Փարիզ, 1906, № 1—2, էջ 31—32։

⁶ Հ. Բ ո յ ա ջ յ ա ն. նշվ. աշխ., էջ 107։

⁷ Նույն տեղում, էջ 108։

Մոտենում էր հայ գրականության նահապետի՝ Րաֆֆու մահվան 25-ամյակը։ «Հայկական միացյալ ընկերությունը» նախապատրաստական մեծ աշխատանք էր տանում այն արժանավայել անցկացնելու և հայ մեծ հայրենասերի գաղափարները անգլիական մտավորականությանը հասանելի դարձնելու համար։

Գեղեհ 1906 թ. Արամ Րաֆֆու և Զարեկ Բոյաջյանի նախաձեռնությամբ և հայկական ակումբի կարող ուժերի գործուն մասնակցությամբ բեմադրվեց Րաֆֆու «Սալբի» վեպի անտիպ հատորի գլուխներից մեկի հիման վրա Բոյաջյանի ստեղծած «Հայաստանի վերակառուցումը» չափածո թատերգությունը։ Այդ ալլաբանական երկխոսությունը բեմականացվեց նաև 1907 թ.։ Երրորդ անգամ այն բեմադրվեց 1913 թ., Րաֆֆու մահվան 25-ամյակին նվիրված հուլիսյանական հանդեսի գեղարվեստական մասում, որը անգլիական պարբերական մամուլի ուղադրությանը արժանացավ։

Այդ կապակցությամբ «Կոչնակը» իր «Օրվան խնդիրները» բաժնում գրում է. «Մանչեստր Կարտիզ» թերթին մեջ կկարդանք, թե Լոնտոնի հայ գաղութը Րաֆֆիի քանհինգամյակը տոնած է Գուինգ Կեյթ Հոլին մեջ։ Այս առթիվ տրված է ներկայացում մը «Հայաստանի վերաշինությունը» գրված Րաֆֆիի կողմից։ Օր. Զապել Պոյաճյան գեղեցիկ ճառ մը կարդացեր է Րաֆֆիի կյանքին ու գործին վրա։ Այս ճառին համառոտագրությունն քաղվածաբար անգլիերեն թերթը մեջբերումներ կընե, զորս կներկայացնենք մեր ընթերցողներուն»։

«Րաֆֆիի գրական ամբողջ գործը սիրո հառաչ մը և բողոքի ճիւղ մըն է այն ստրկության ու անտարբերության հանդեպ, ուր իր ազգը ինկած էր։ Եվ արդյունքը. շորացած կմախքները հարություն առին։ Կյանքի էլեկտրական հոսանք մը, գիտակցական զգացում մը հիւ գալ սկսավ ամբողջ ազգի մարմնի մեջ։ Ամեն տեղ, Հայաստանի ամեն հեռավոր խորշին մեջ, Րաֆֆիի երկերը մեծ հետաքրքրությամբ փնտրվեցան, մթին թաքստոցներու մեջ պահվեցան, գետնահարկերու մեջ մոմի տմույն լույսով կարդացվեցան, տուն-տուն գաղտնի միջոցներով փոխադրվեցան։ Այսպես ազգը սկսավ ինքզինք ճանչնալ, ինք իր վրա հավատալ, առաջ ընթանալ խոլարշավ, նոր կյանքով մը զեղուն դեպի ազգային յարձրագին կյանքի մը իտեալային բարձունքները։ Րաֆֆի մեծ հայրենասեր մըն էր, հայրենասեր մը՝ որ կտառապեր իր ժողովուրդին ցավերով, որ կսիրեր իր հայրենի երկիրը, լեզուն և պատմությունը»⁸։

Րաֆֆու մահվան 25-ամյակն ըստ արժանվույն նշելու գործում մեծ պատասխանատվություն ու եռանդ ցուցաբերեցին հատկապես Արամ Րաֆֆին և Զարեկ Բոյաջյանը։ Մինչ այդ Արամ Րաֆֆին արդեն դեռ էր իր «Րաֆֆի» մեծարժեք հոդվածը (լույս է տեսել «Տարագում», 1908 թ. № 5-ում) մեծանուն գրողի մահվան 20-ամյակի առթիվ, «Մի քանի խոսք Րաֆֆիի նշանակության մասին» հոդվածը և «Պարսկական պատկերների» (Վիեննա, 1913 թ.) առաջաբանը։ Իսկ Զարեկ Բոյաջյանը Րաֆֆու «Սամվել» պատմավեպից կատարած «Արաքսի սրբաբնները» խորագրով իր արժեքավոր թարգմանությունը տպագրեց «Արարատ» հանդեսի 1913 թ. 2-րդ համարում։ Րաֆֆու «Հարեմից» կատարած «Բալլադ» խորագրով իր մեկ այլ չափածո թարգմանությունը Բոյաջյանը գետեղեց «Արարատ» ամսագրի նույն թվականի 4-րդ համարի գրական բաժնում։

Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը։ Արամ Րաֆֆին Բաքու-Լոռի եղբայրների հետ Արևմտյան Հայաստան և Կովկաս կատարած ճանապարհորդություններից հետո հրապարակում է իր հավաքած նյութերը և անձնական նկատառումները՝ «Ճամփորդություն Հայաստանի մեջ և քաղաքականություն» խորագրով։ Այս նա Հայաստանի պատմության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով հանդես է գալիս անգլիական պարբերական մամուլում։

Այդ բոլոր գործերին իրադեկ և աջակից Զարեկ Բոյաջյանը գրում է. «Երբ պատերազմը ծագեցավ, Լոնդոնի հայերուն մեջ ազգասիրական եռանդը սաստկացավ իրենց տրված խոստումներուն և հույսերուն ազդեցության տակ։ Կեդրոն մը հաստատեցին քաղաքի ամենալավ փողոցին մեջ՝ հայոց խնդրին նկատ-

⁸ «Կոչնակ», Նյու Յորք, 30 օգոստոսի 1913։

մամբ տեղեկություններ ընդունելու և հրատարակելու: Ստեղծվեց «Հայկական տեղեկատու բյուրո»: Արամ Բաֆֆին այս գործին ղեկավար անվանվեցավ և չարաչար աշխատեցավ: Բավական մեծ թվով գրքույկներ հրատարակեց, անգլերեն լեզվով անգլիական թերթերուն մեջ հոդվածներ տպել տվավ, և ազդեցիկ քաղաքական մարդոց հետ թղթակցություններ, տեսակցություններ ունեցավ, մինչև առողջությունը կորսնցուցեց, թոքախտն բռնվեցավ»⁹:

Հայոց դատի ցավերով տառապելուց և հայոց հարցը ամենուր պաշտպանելուց բացի, Արամ Բաֆֆին, Ջաբել Բոյաջյանի գործնական աջակցությամբ, իր հոգու պարտքն էր համարում նաև հայ ժողովրդի ձախողված դատի այդ ճգնաժամային ժամանակահատվածում եվրոպացիներին թարգմանաբար ներկայացնել հայ գրականության, պատմության և մշակույթի գանձերը:

Արամ Բաֆֆու և Ջաբել Բոյաջյանի այդ նպատակին ուղղված ջանքերի արգասիքը եղավ այն, որ 1916 թ. վերջերին լույս տեսավ «Հայկական ավանդություններ և բանաստեղծություններ» թարգմանական մեծարժեք ժողովածուն:

Եթե այս ժողովածուում Ջաբել Բոյաջյանը փայլեց իր թարգմանչական արվեստի «շեքսպիրյան-միլտոնյան» լեզվառճական ձևերի ճոխությամբ ու հարստությամբ և հատրնտիրի նկարագրողումները անձամբ ինքը կատարեց հայկական դասական մանրանկարչությանը բնորոշ գունալին սքանչելի բազմերանգությամբ, ապա Արամ Բաֆֆին ժողովածուում ղեկավարեց գոթական երգիչներին և հայ միջնադարյան գրականությանը նվիրված իր բովանդակալից հետազոտությամբ, դրականագետ-պատմաբանի խոր իմացությամբ հմտորեն պարզաբանեց մեր գոթական երգերի և հայկական ավանդապատումների սկզբնաղբյուրները:

Թարգմանչահին մասնավորապես մեծ գովեստով է խոսել Արամ Բաֆֆու այդ ուսումնասիրության մասին, վկայելով, որ «այս աշխատությունը շատ գնահատվեցավ անգլիական մամուլեն, լուրջ գրական թերթեր ըսին, որ ամենաբարձր արժեք ունեցող ուսումնասիրություն մըն է»¹⁰:

Արամ Բաֆֆու և Ջաբել Բոյաջյանի միացյալ ուժերով ստեղծված «Հայկական ավանդություններ և բանաստեղծություններ» ժողովածուն իր լույս ընծայման հենց առաջին օրից անմիջապես գրավեց Անգլիայի (և ոչ միայն Անգլիայի) գրական հասարակայնության ուշադրությունը և միաժամանակ բարձր գնահատվեց ճանաչված գրաքննադատների ու եվրոպական պարբերական մամուլի կողմից: Մասնավորապես անգլիական կենտրոնական ամենաազդեցիկ օրաթերթերն ու ամսագրերը ընդարձակ գրախոսականներով հսնդես գալով, ընդգծեցին ժողովածուի թարգմանական, գրականագիտական, գրական-գեղարվեստական արժանիքները:

«Չնայած Հայաստանին ճակատագրի բերմամբ բաժին է ընկել միմիայն դարավոր ճնշում ու թշվառություն,— գրել է «Ռեվյու դի ադիաթիքը»,— այնուամենայնիվ զարմանում ես, թե այդ ինչպե՞ս է, որ նրա գրականությունը հազեցված է հումորով ու պայծառատեսությամբ, կյանքի խոր հայեցողությամբ ու կենսասիրությամբ»: Ապա իր խոսքն ընդհանրացնելով, գրախոսողը գրտնում է, որ այս «հատորում արվեստն ու գրականությունը հանդես են գալիս մեծ ներդաշնակությամբ»¹¹:

Արամ Բաֆֆին իր մահկանացուն կնքեց 1919 թ. նոյեմբերի 12-ին 44 տարեկան հասակում, ամուրի և անժառանգ: Ջաբել Բոյաջյանի դիպուկ խոսքերով ասած՝ «ան աղգին համար ղոհվեցավ բառին ավելի խորունկ իմաստով, քան զինվորը, որ կզոհվի պատերազմի զաշտին վրա, որովհետև մտավոր պայքար մղելը ավելի քիչ մարդոց տրված է: Արամ Բաֆֆի մեծ փափակը եղած էր գրական ասպարեզին մեջ մտնել, հոր պես: Բայց կյանքի պարագաները ժամանակ և առիթ չտվեցին: Ունի նաև մի քանի անտիպ շատ հետաքրքրական

⁹ Զ. Բոյաջյան. նշվ. աշխ., էջ 108:

¹⁰ Նույն տեղում, էջ 109:

¹¹ «Պայլար», նոր տարվա բացառիկ, Նյու Յորք, 1958, էջ 256:

երգիծարանություններ: Հայկական նյութերու վրա մեծ պաշար հավաքել էր գրելու համար, բոլորը հետը տարավ գերեզման»¹²:

«Հայկական միացյալ ընկերության» օրգան «Արարատ» հանդեսը Արամ Բաֆֆու հիշատակին նվիրված իր մեծարման խոսքում¹³, վերևում նշված նրա աշխատությունները թվարկելուց բացի, մասնավորապես նշում է, որ նա 14 տարեկան հասակից սկսել է գրել գրականագիտական էսսեներ «Զարեհ Տիտանյան» գրական կեղծանունով և իր վերլուծական տրամաբանությամբ մեծ տպավորություն էր թողնում նրանց վրա, ովքեր առիթ ունեցան հաղորդակցվելու նրա հետ: Ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ Արամ Բաֆֆին աշխատում էր որպես քարտուղար ռուսական մամուլի գործակալությունում: Մոտ երկու տարի ալստեղ աշխատելով, նա հրատարակեց 27 պամֆլետ: Հետագա տարիներին, Հայաստանին նվիրված իր բազում հոդվածներից զատ, նա գրում է «Պատմական նրդեկան» հետազոտությունը, որում անդրադառնում է նաև Հովհաննես Երզնկացու (1250—1326) հոգևոր գործունեության ու շափածո ստեղծագործություններին, նրան համարելով իր ժամանակի մեծ ճանաչում գտած հոգևորական գործիչներից և ստեղծագործող մտավորականներից մեկը:

Աննա Բաֆֆին ծնվել էր ասորի հոգևորականի ընտանիքում և ավարտել է Ուրմիայի ամերիկյան միսիոներական օրիորդաց դպրոցը: Բավականին զարդացած և լայն մտահորիզոնի տեր կին լինելով, քաջ տիրապետում էր հայերենին, իր մայրենի ասորերենին, անգլերենին, խոսում էր ռուսերեն, վրացերեն, պարսկերեն, ադրբեջաներեն: Այս բարեմասնություններին ավելացնենք նաև նրա այն ջանքերը, որ նա թափեց ամուսնու պատգամը կատարելու՝ որդիներին կրթական բարձրագույն կրթության տալու ուղղությամբ: Որդիները, որպես բարեկիրթ մտավորականներ, դարձել էին իրենց մեծանուն հոր, հայրենասեր մեծ որդի՝ «ժողովրդին կտակած թանկագին գանձերի օրինական կտակակատարները և ավանդապահները»:

Աննա Բաֆֆուն հաջողվում է տպագրական գործում եղած անհամար դրժվարությունները հաղթահարելով՝ հրատարակել «Սալբիի» առաջին հատորը, «Զահրուժարը», «Մինն ալսպես, մյուս ալնպեսը»:

Աննա Բաֆֆու անձնական խառնվածքի ու հասարակական պարտականություններին ինքնամոռաց նվիրվելու ակնառու բարեմասնությունները ընդհանրացնելով, Բաֆֆու ծննդյան 100-ամյակին նվիրված «Բաֆֆիի ընտանիքը» իր մեծարժեք հոդվածում Զաբել Բոյաջյանը Աննա Բաֆֆու մասին իր դրժվարանքի խոսքում ակնածանքով գրում է. «Այս քաջ, առաքինի սիրտ ունեցող կինը իսկապես արժանի էր ամբողջ ազգե մը պաշտված իր ամուսինին: Ուղղամիտ, եռանդուն և հալոնասեր, յեար բան մը, որ կարողանար դիմել շեղեր իր ընտրած ճանապարհին: Ամուսինին հիշատակը ոչ միայն միտքին մեջ միշտ թարմ էր, հապա նաև անոր նպատակները, բաղձանքները առաջացնել: Մեկ խոսքով... հրատարակչի և գրավաճառի երևու պաշտոնները միասին կկատարելու: Բաֆֆիի գործերը տարածել և անոնց համար եղած բազմաթիվ պահանջները գոհարնել... Մեկ վեպ հրատարակել տվավ, որ դեռ լույս տեսած չէր, ձեռագիրը աչքի անցնելով և տպագրությանը հսկելով: Այսպես «Սալբին», որ Բաֆֆիի երաժշտական երկար վեպն էր, վերջինը եղավ լույս տեսնելու (Վիեննա, 1911 թ. Ի «Պարսկական պատկերներ», Վիեննա, 1913 թ.—Տ. հ.): Իր ամուսինին գրական աշխատություններուն հոգ տանելն զատ... ամենեն մեծը և իր սիրտին ամենեն մոտը Բաֆֆիի կենսագրությունը պատրաստելն էր: Գիշերները կաշիատեր գլխավորապես, որովհետև դերեկը ուրիշ բաներ կգրադեցնեին դիմելու: Բայց, մինչև անգամ այս վիշտը (Արամի անժամանակ մահը—Տ. հ.) երեսագրությունը մոռանալ չը տվավ: Տենդային շտապով վերադարձավ գործին, կարծես թե դիտեր, որ ժամանակը կարճ էր: Եվ վերջացուց, այնպես որ

¹² Զ. Բոյաջյան. Նշվ. աշխ., էջ 110:

¹³ „Ararat“, London, 1919, № 66, p. 445.

շուտ կամ ուշ լույս կտեսնեն: Այսպես ութ ամիս տառապել է վերջ, ինքն ալ նույն ճանապարհով գնաց»¹⁴:

Աննա Րաֆֆին վախճանվեց 1920 թ. հունիսին, 72 տարեկան հասակում: Լոնդոնահայ գաղթօջախը կորցրեց իր ազգային-մշակութային կյանքի անխոնջ գործիչներից երկուսին՝ նախ Արամ Րաֆֆուն, ապա Աննա Րաֆֆուն, որոնց բացակայությունն անմիջապես զգացվեց: Լոնդոնահայ գաղթօջախը ընդհանրապես, հայկական ակումբը մասնավորապես զրկվեցին մոտ քառորդ դար հայ համայնքի ազգային, հասարակական, գրական-մշակութային կյանքի եռանդուն կազմակերպողներից և այդ բոլոր տարիներին ակումբի բոլոր միջոցառումներին ակտիվ և գործուն մասնակցություն ցուցաբերողներից, «Հայկական միացյալ ընկերության» գործունեությանը հայրենասիրական շունչ ու ավյուն պարգևողներից, ընկերության մեջ համերաշխություն սերմանող, խաղաղ համագործակցության նվիրյալ ջատագովներից:

Ծիրշտ է՝ Արշակ Րաֆֆին, մեծանուն գրողի հայրենանվեր գերդաստանի կրտսեր անդամը, պակաս ակտիվություն և կազմակերպչական ձեռներեցություն չէր ցուցաբերում «Հայկական միացյալ ընկերության» շրջանակներում սարվող, ազգային հարցերին առնչվող աշխատանքների նկատմամբ, որի ապացույցը կարող ենք համարել թեկուզ այն փաստը, որ 1915 թ. «Ընկերության» տարեկան հաշվետու ժողովում Արշակ Րաֆֆին բարձրացնում է այսպիսի մի դեմոկրատական բնույթի հետաքրքիր հարց՝ «Տարեկան հաշվետու ժողովից երկու շաբաթ անց, ընկերության նախաձեռնությամբ հրավիրել լոնդոնահայության ավելի բարձր մակարդակի ժողով, որտեղ պետք է հնարավորություն ընձեռվի բոլոր հայերի մասնակցությանը՝ առանց դասի և ցենզի խտրականության և ձայների ազատության պայմաններում քննարկվեն ազգային հետաքրքրություններ կայացնող բոլոր տիպի հարցերը»¹⁵: Զաբել Բոյաջյանը և շատ ուրիշներ պաշտպանում են նրա առաջարկությունը: Այսուհանդերձ հարկ է նշել, որ Արշակը մասնագիտական առումով ո՛չ մոր նման հմուտ Րաֆֆիագետ էր, ո՛չ էլ եղբոր պես հայոց պատմության, հայ և անգլիական գրականության ճանաչված գիտակ: Նա, ամենից առաջ, մանկավարժության բնագավառում ուսաց լեզվի և գրականության անվանի մասնագետ էր:

Այդ իսկ պատճառով Աննա և Արամ Րաֆֆիների բացակայությունը խիստ բացասաբար ազդեց գաղթօջախի ազգային-մշակութային գործունեության վրա, որը 1920—30-ական թթ. անկում է ապրում: «Լոնդոնի հայկական միացյալ ընկերությունը» նյութական անձուկ կացության մեջ ընկավ: Սակայն կրկին ջանքեր էր թափում իր ազգանպաստ գործունեությունը շարունակելու համար: Այդ մասին է վկայում 1926 թ. ընկերության անցկացրած գրական նրստաշրջանը, որը տևում է սեպտեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 4-ը: Կարդացվում են մի քանի դասախոսություններ, որոնց ունկնդրում է նաև Զաբել Բոյաջյանը: Հաջորդ տարում գրական ակումբը իր երկրորդ նստաշրջանի փակում է մարտի 26-ին: Այս նստաշրջանի ընթացքում երկու շաբաթ մեկ անգամ դասախոսություններ եղան: Ընդամենը տեղի ունեցավ երեք դասախոսություն: «Հայաստանի կոչնակը» վկայում է. «Դասախոսները եղան՝ 1. օր. Զաբել Բոյաջյան. «Մի քանի նմանություններ հայ և անգլիական բանաստեղծությունների միջև», 2. պ. Արշակ Րաֆֆի. «Թուսական գրականությունը», 3. պ. Սմբատ Քեսեճյան. «Հայ թատրոնի պատմությունը» (1815—1880):

Այսուհանդերձ այդ մի բուռ մտավորականությունը ուրախ էր, որ նույն տարում կրկին ունենալու է իր գրական ակումբի երրորդ նստաշրջանը, որը անցկացվելու էր մայիս և հունիս ամիսներին և որի ծրագիրը արդեն պատրաստ էր, երբ հանկարծ Լոնդոնի հայ գաղութն ընկավ անմխիթար վիճակի մեջ:

«Երեսուն տարի առաջ կազմված «Լոնդոնի հայոց միացյալ ընկերությունը», — գրում է ժամանակակիցներից մեկը, — որ գրեթե գաղութիս միակ ազգային կազմակերպությունն է եղած մինչև անցյալ տարի և իր շափով բավա-

¹⁴ 2. Բոյաջյան. նշվ. աշխ., էջ 109—110:

¹⁵ „Ararat“, 1915, № 19, p. 256.

կան մեծ ծառայություն է մատուցած ազգին թե՛ պատերազմի ժամանակ և թե՛ անկի առաջ և անկի ի վեր, ցավ ի սիրտ պետք է ասել, որ այժմ կարծես իր վերջին օրերը կապրի Պակաս չեն սրտացավ ազգայինները, որոնք կփափագին Միացյալ ընկերությունը կենդանացած տեսնել, բայց ինչպես նշելն զորած է դարևր առաջ «դուգություն է մայր բարյաց, անզուգություն ծնող շարյաց»։ Մինչև հիմա մեկ և միաբան եղող այս գաղութին մեջ մի քանի տարի է ի վեր փորձեր կլինին անմիաբանության որոմ ցանել և քանի այս երկպառակություններ կտիրեն, չենք կարող որևէ օգտակար գործ սպասել»¹⁶։

Ստեղծված այս անբարենպաստ իրավիճակից ամենից շատ տուժեց լոնդոնահայ դաղթօջախի գրական կյանքը՝ այլևս գրական նստաշրջաններ տեղի չունեցան։ Մեծ ճիգերով իրենց գոյությունը շարունակեցին «Հայ տիկնանց միությունը», «ՀՊԿ»-ը, «Հայաստանի կարմիր խաչը» իր մասնաճյուղերով և Լոնդոնի «Աղքատախնամը»։

Աննա և Արամ Րաֆֆիների, իր ամենամտերիմ ու անկեղծ բարեկամները՝ կորուստը ծանր էր ապրում նաև Զաբել Բոյաջյանը։ Համայնքի կյանքից կրտորված, երկար ժամանակ հոգեկան միայնության և հուսալքության պահեր ապրելով, նա իր ծրագրած թարգմանական նոր ժողովածու կազմելու տառապալից աշխատանքը թողնելով, ուղևորվում է Իտալիա և Վենետիկից Արշակ Հոսպանյանին ուղղված նամակներից մեկում թարգմանական նոր ժողովածու կազմելուց իր հրաժարվելու հանգամանքը այսպես է բացատրում. «Այլևս մեծ բան ալ չեմ կարող անել, հրատարակածս ալ Արամ Րաֆֆիի օգնությամբն էր, որովհետև մինչև անգամ այդքանը ես առանձին չէի կարող գտնել և ձեռք բերել, Լոնդոնի մեջ հայկական կյանքեն բոլորովին կտրված կապրիմ, և արդեն հայկական գրականության վրա բան գիտցող ալ չկա Լոնդոն»¹⁷։

Ինչ վերաբերում է Րաֆֆու կրտսեր որդուն՝ Արշակ Րաֆֆուն, ապա իր հարապատենքին կորցնելուց հետո նա նույնպես հոգեկան միայնության ծանր սլահեր է ապրում և աստիճանաբար մեկուսանում լոնդոնահայ համայնքի կյանքից ու իր միջթարությունը գտնում միմիայն մանկավարժության բնադավառում։ Մոտավորապես կես դար ուսերեն դասավանդելով Լոնդոնի Արքայական քոլեջում, նա, «դժվարին ուսերեն լեզվի սովորեցնելու մեջ մեծ հաջողություն» ունենալով, մեծ հեղինակություն է ձեռք բերում որպես ուսերենի հմուտ մասնագետ և հրավիրվում է աշխատելու նաև Քեմբրիջի և Օքսֆորդի համալսարաններում։ Կյանքի վերջին տարիներին կենսաթոշակի անցնելով, Արշակը, Բոյաջյանի խոսքերով ասած, «իր շատ անուշիկ» կնոջ՝ Ալեքսանդրայի հետ «Լոնտոնեն գրեթե դուրս, փոքր, բայց շատ սիրուն տան մը մեջ խաղաղ և բիշ մը քաշված կյանք կանցնեն»։

Արշակ Րաֆֆին մահացավ 1946 թ. օգոստոսի 12-ին, 67 տարեկան հասակում, հայրենիքից հեռու, մայր երկրի՝ իր ծննդավայրի անհազ կարոտը սրբտում, անժառանգ։ Միակ ծառանգությունը, որ թողեց իր իդանդուհի կնոջը, հոր թանկարժեք արխիվն էր։ Հայագիր և անգլիագիր պարբերական մամուլում տպագրվեցին մահախոսականներ նրա մասին։

«25 տարիներ ի վեր կը ճանչնամ Արշակը և միատեղ պաշտոնավարած եմ,— իր դամբանականում մասնավորապես ասաց Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Ելիզաբեթ Հիլը,— ան ծառայեց իր հայրենիքին՝ Հայաստանին, որովհետև իր անձնավորությունը և իր տաղանդը կմարմնավորեն իր ազգային նկարագիրը։ Ան ծառայեց Ռուսաստանի և առհասարակ բոլոր սլավ ազգերուն, որովհետև իրենց լեզուն գիտեր իբրև վարպետ մը և կուսուցաներ այնպիսի հմտությամբ ու ճկունությամբ, որ բուն ուս մը կամ որևէ սլավ մը էջրեր չէր կրնար գիտնալ։ Ան ծառայեց մեծն Բրիտանիո, իր որդեգրած հայրենիքին, ուսուցանելով անոր հարյուրավոր դավակներու սլավոնական լեզուները ինչպես որ պետք էր։ Համեստ էր ան և կմերժեր փառասիրությունը»։

¹⁶ «Հայաստանի կոչնակ», 1927, № 5, էջ 1426։

¹⁷ Ե. Զաբենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Զոպանյանի ֆոնդ, գ. 6368, թ. 2։

Հնդհանրացնելով մեր խոսքը Րաֆֆու ժառանգների մասին, սխալված չենք լինի, եթե ասենք, որ լոնդոնում ծավալած նրանց ազգասիրական, հայրենասիրական գործունեությունը, իրոք, բնականոն շարունակությունն էր իրենց մեծանուն հոր կատարած հայրենական վսեմ գործի:

СЕМЬЯ РАФФИ В ЛОНДОНЕ

Т. Г. ХОРШИДЯН

Резюме

Забел Бояджян, видная писательница, художница и активный деятель лондонской армянской колонии конца XIX—начала XX вв., на одной из встреч с англичанами, сочувствующими армянам, познакомилась с Анной Раффи, вдовой крупного армянского писателя Раффи. В дальнейшем она стала одним из ближайших друзей дома Раффи и оставила воспоминания об этом доме.

В настоящей статье на основе указанных воспоминаний оценивается национальная, общественная и культурная деятельность Анны Раффи и ее сыновей Арама и Аршака Раффи. Вся их сознательная жизнь была связана с патриотической деятельностью Армянского клуба в Лондоне. Национальные, литературные, общественные, культурные мероприятия клуба служили двум целям: проблеме сохранения армянской колонии в Лондоне и пропаганде в Англии духовных ценностей армянского народа.